# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտի 1

№ 1284-Ա « 08 » ապրիլի 2025թ.

ԱՐՄԻՆԵ ՎՈԼՈԴԻԱՅԻ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՀԱՆԴԲՈԼԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԵՎ ԽԱՂԱՅԻՆ ԱՅԼ ՄԱՐԶԱՁԵՎԵՐԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 16-րդ հոդվածի 1.5-րդ մասով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանով հաստատված կարգի 83-րդ կետով և հիմք ընդունելով «Երևանի հանդբոլի մասնագիտացված և խաղային այլ մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացնող մրցութային հանձնաժողովի 2025 թվականի ապրիլի 4-ի «Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին» N 3 որոշումը՝

1.Արմինե Վոլոդիայի Անտոնյանին՝ 2025 թվականի ապրիլի 8-ից ազատել «Երևանի հանդբոլի մասնագիտացված և խաղային այլ մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնից՝ աշխատանքային վերջին օր համարելով 2025 թվականի ապրիլի 7-ը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ